ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Մասնաճյուղը ԵՊՀ-ի կրթական ծրագրերով պատրաստում է բարձր որակավորում ունեցող բակալավրի կրթությամբ մասնագետներ, գիտամանկավարժական կադրեր: Իրականացնում է գիտական, ուսումնամեթոդական հետազոտություններ, գիտական մշակումների տարածում ու մշակութային- լուսավորչական աշխատանքներ:
- ԵՊՀ-ի միջոցով և իր նախաձեռնությամբ ծավալում է համագործակցություն միջազգային ասպարեզում:
- Մասնաճյուղում ուսանողների ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ գործող օրենսդրության համապատասխան:
- Շրջանավարտները ստանում են Երևանի պետական համալսարանի կողմից տրվող պետական նմուշի դիպլոմ:
- Մասնաճյուղի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայում:
- Մասնաճյուղում գործում է ուսանողների ինքնակառավարումն ու նրանց շահերի պաշտպանությունն իրականացնող ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) և ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ), որը կազմակերպում է գիտակրթական տարբեր միջոցառումներ, նպաստում ուսանողների գիտական մտքի զարգացմանը:
- Մասնաճյուղում գործում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, որն աջակցում է շրջանավարտներին մասնագիտական աճի և աշխատանք գտնելու հարցում:

www.ijevan.ysu.am

2017թ. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ				Ուսման վարձը (հզ. դրամ)
	մրցութային			ոչ մրցութային	
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	ՀԼԳ(գ)	Մ(գ)**			320000
Դիզայն	Գծն.	Կոմպ.		ՀԼԳ(գ)*	320000
Պատմություն	ՀԺՊ(գ)	ՀԼԳ(գ)		ՕտԼ(գ)*	350000
Հայոց լեզու և գրականություն	ՀԼԳ(բ)	ՀԼԳ(գ)		ՀԺՊ(գ)* կամ ՕտԼ(գ)*	320000
Անգլերեն լեզու և գրականություն	ԱնգԼ(բ)	ԱնգԼ(գ)	ՀԼԳ(գ)**		380000
Ֆրանսերեն լեզու և գրականություն	ՖրԼ(բ)	ՖրԼ(գ)	ՀԼԳ(գ)**		380000
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)		400000
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ա(գ) **		ՀԼԳ(գ)*	350000
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	ԱնգԼ(գ)** կամ Ֆ(գ)**		ՀԼԳ(գ)*	350000
Սոցիալական աշխատանք	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)		Մ(գ)*	320000
Զբոսաշրջություն	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)	Ա(գ)** կամ ՀԺՊ(գ)**		350000

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:
** Նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական, կարող են դիմումհայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների ավարտական քննությունների կամ տարեկան գնահատականը:

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի ուսման վարձաչափերն ամենամատչելիներից մեկն է տարածաշրջանում: Մասնաճյուղում գործում են ֆինանսական օժանդակության բազմատեսակ ծրագրեր և ուսման վարձերի զեղչերի ճկուն համակարգ:

ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան
Հեռ.՝ (374 263) 4-00-50, 4-00-35
Էլ. փոստ՝ ysu_ib@ysu.am, ijevan@ysu.am
Վեբ կայք՝ ijevan.ysu.am

Իջևան 2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը գտնվում է Հայաստանի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ Իջևան քաղաքում, մայրաքաղաք Երևանից 130 կմ հեռավորության վրա: Քաղաքը գրեթե բոլոր կողմերից շրջապատված է խրոխտ լեռներով ու զովասուն անտառներով: Մասնաճյուղի շենքը տեղակայված է Աղստև գետի ափին՝ Բուսաբանական այգու անմիջական հարևանությամբ: Բնական գեղեցիկ միջավայրը և տեղի մեղմ միկրոկլիման նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսման և հանգստի համար:

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի առաքելությունն է ուսանողներին տրամադրել բազմակողմանի և մրցունակ կրթություն, որը նոր հնարավորություններ կապահովի շրջանավարտների համար:

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը գործում է 1994 թվականից և մինչ օրս տվել է շուրջ 5350 շրջանավարտ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է պետական և հանրային կառույցներում, բանկային համակարգում, արտադրության տարբեր ոլորտներում:

2006 թ. գործում է Հեռակա ուսուցման բաժինը («Տնտեսագիտություն», «Սերվիս», «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Հոգեբանություն», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություններով):

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Մասնաճյուղում դասախոսում են ԵՊՀ-ից և ՀՀ առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմ:

Մասնաճյուղի գրադարանը հագեցած է տարալեզու մասնագիտական, գեղարվեստական, մշակութային, քաղաքական և այլ ոլորտներին վերաբերող գրականությամբ: Գրադարանն ունի էլեկտրոնային գրականության ֆոնդ, դասախոսությունների սղագրեր:

Գրադարանի մասն են կազմում ժամանակակից համակարգչային տեխնիկայով և անվճար ինտերնետով ապահովված ընթերցասրահները:

Մասնաճյուղում գործում են համակարգչային լսարաններ, լաբորատորիաներ, արվեստանոցներ:

Մասնաճյուղի արվեստի ֆակուլտետի ուսանողները և դասախոսները մշտապես իրենց աշխատանքները ցուցադրում են Իջևանի քաղաքային պատկերասրահում, մասնակցում տարաբնույթ ցուցահանդեսների:

Մասնաճյուղում պարբերաբար հրավիրվում են գիտական նստաշրջաններ և կոնֆերանսներ, որոնցում ներկայացվող զեկուցումները տեղ են գտնում «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում: Վերջինս բավարարում է ԲՈՀ-ի պահանջները և ճանաչվում ընդունելի ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար:

Մասնաճյուղում մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների հանգստին: Այդ նպատակով կազմակերպվում են տուրիստական արշավներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր Հայաստանի և հարևան Վրաստանի առողջարանային և պատմամշակութային վայրեր:

Մասնաճյուղի հանդիսությունների դահլիճում պարբերաբար կազմակերպվում են համերգային, թատերական միջոցառումներ, ինչպես նաև հանդիպումներ նշանավոր մարդկանց և անվանի գործիչների հետ:

Մասնաճյուղն ապրում է ակտիվ մարզական կյանքով: Ուսանողները, բացի ամենօրյա պարապմունքներից ու խաղերից, ցուցաբերում են նշանակալի արդյունքներ միջազգային տարբեր ստուգատեսներում: